Թ. ՄԵԾՈՓԵՑՈՒ ԿԵԱՆՔԸ

Ա.

Թովմա Մեծոփեցին ԺԵ. դարու հայ վարդապետների մէջ առաջնակարգ տեղ է բռնում իբրև մատենագիր, եկեղեցու պաշտօնեայ և վարժապետ։ Տարաբաղդաբար այս բազմաշխատ և արդիւնաւոր վարդապետի մասին ամփոփ և ամբողջական մի ուսումնասիրութիւն չկայ՝ նրա կեանքի մանրամասնութիւններով, գրական և վարժապետական գործունէութեան գնահատութեամբ։ Ներկայիս նպատակ չունինք այդ թերին լրացնել ընդարձակ մտքով, այլ՝ մեր նոր հրատարակած նիւթերի առթիւ ամփոփելով և՛ հները՝ տալ միայն նորա կենսագրութեան ուրուագիծը։

Թովմա Մեծոփեցին Վասպուրականի Քաջբերունեաց Աղի կամ Աղիովիտ գիւղից էր, ազնուական տոհմից, Ստեփանոս և Շամշա ամուսինների որդին*։ Նորա հօրեղբայրներն էին Մկրտիչ քահանայ և Մկրտիչ միայնակեաց**. եղբայրներն էին Յովհաննէս քահանայ, Յովհաննէս, Արիստակէս, Գորգի մելիք, որ Աղի գիւղի մելիքն էր, Ամիր մելիք, Սուլթանշա***։ Ունէր և մի քոյր, որի անունը յայտնի չէ. սորա որդին էր Ծերուն, որ ուսել էր առ ոտս Թովմայի և 1446 թուին՝ Կիրակոս Վիրապեցու աքսորման ժամանակ՝ գտնուում էր Էջմիածնում իւր մօրեղբօր մօտ։ Գորգի մելիքի կինն էր Սալչուկ և սրանց զաւակներն էին Յովհաննէս քահանայ կամ կրօնաւոր, պարոն Գրիգոր, Ստեփանոս և Մինաս Խալիֆատ†։ Իբրև եղբօրորդիք յիշուում են նաև Ներսէս, Կարապետ, Վրդանէս,

---

* Կիրակոս Բանասէր՝ Արարատ. 1915. օգ. — սեպտ. 743. (6) Նոր նիւթեր Թովմա Մեծ. կենսագր. Արարատ 754. 761. 762. (17. 24. 25). Փակագծի մէջ առնուած թուահամարները Նոր նիւթերի այս արտատպութեան երեսներն են ցոյց տալիս։ Փիրզալէմեան. Նօտարք Հայոց 147.

** Նոր նիւթեր Ար. 754. 761. 765 (17. 24. 26)։

*** Նոր նիւթեր Ար. 754. 757. 761. 765. (17. 20. 24. 26) Գորգի Մելիքի մասին՝ տես նաև Թովմայի Պատմ. Լանկթամուրայ. Փարիզ. 1860. 93. Նոր նիւթեր. Կիրակոս Բանասէր. Ար. 745. 749. Ար. 751. (6. 12. 14)։ Յովհաննէս եղբօր մասին. Պատմ. Լանկ. 48։ Արիստակէսի մասին Պատմ. Լանկ. 111։

† Նոր նիւթեր Ար. 760. 761. (23. 24.)։ Թովմա Մեծոփ. Յիշատակարանը. Կոստանեանց, Թիֆլիս. 1892. 80.

†† Փիրզալէմեան. Նօտարք Հայոց. 147. Նոր նիւթեր. Ար. 761. (24)։